

աներեւակայելի պատկերներ: Այսպէս օրինակ՝ *Լքումին եւ Բեգասին* մէջ ինչ ինչ հատուածներ:

Գ. *Հեթանոս երգերու* մէջ մարդ կը հանդիպի շարք մը քերթուածներու, որոնք ճապաղ ու ձգձգուած են. մինչդեռ բանաստեղծութեան մէջ, նոյնիսկ նկարագրական կտորներու նկատմամբ, գերադասելի պէտք է համարել գրութեան սեղմ ձեւը, թողլով որ մնացածը ընթերցողը իր երեւակայութեամբ լրացնէ, հարկաւ պատկերաւոր արտայայտութիւններով նմանօրինակ լրացումներու շարժառիթը տալով: Երբեմն մարդ կը փորձուի նոյնիսկ խորհիլ թէ բանաստեղծը այսինչ նիւթի մասին ուզեր է անպատճառ այսչափ գրել: Այդպէս ձգձգուած ու ճապաղած են օր. *Տրտունջքը*, *Մեքենաները* եւայլն, որոնք մասնաւոր հետաքրքրութեամբ կը սկսին, բայց նոյն ձեւով չեն կրնար շարունակուիլ: Մարդ կը ձանձրանայ ուղղակի ամէն բան բանաստեղծէն լսելէն:

Դ. *Հեթանոս երգերու* մէջ կան նաեւ արհեստականօրէն մէջ մտած ամբողջական ու հատուածային մասեր. իսկոյն մարդու աչքին կը զարնէ թէ՛ ակնարկուած կտորները ո՛չ թէ բանաստեղծի զգացմունքի ու երեւակայութեան ծնունդն են, այլ տեսակ մը արտաքին ազդեցութեան հետեւանք: Այսպէս օրինակ, *Երեք քոյրերու* վերջին տունը բոլորովին արհեստական է եւ նախորդ տուներու առաջ բերած տրամադրութիւնը մէկ անգամէն կը փճացնէ. նոյնպիսի արհեստական վերջաւորութիւն ունին նաեւ *Սպասում* եւ *Մանուս աղօթքը* քերթուածները: Իսկ *Մայիս մեկը* ամբողջովին պատուէրով գրուած ոտանաւորի մը տպաւորութիւնը կը թողու:

Ե. Ամենաքննադատելի կէտը սակայն *Հեթանոս երգերու* մէջ ղէպի կիւնը արտայայտող սէրն է: Այն ամէն կտորները, որոնք նուիրուած են կնոջ, կը նկարագրէն անոր մարմինը, շարժումները, պարը եւ առ հասարակ արտաքին գրաւչութիւնները կամ կ'արտայայտեն այր մարդու ամէն կարգի ցանկութիւնները: Առէք օրինակ *Հեթանոսականի չերքէզուհին*, *Հարճի* եւ *Ո՛, Տալիյթաի* հերոսուհիները, *Ո՛վ*